ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2022 թ.

Էմիլյա Հոսյանին, ք. Երևան,
Այգեստան 11 փողոց, տուն 34/1
/Էլ. հասցե՝ emiliahosyan@gmail.com/

Ի պատասխան Ձեր 28.11.2022թ. առցանց հարցմանը

Հարգելի տիկին Հոսյան

Ախթալա-Ալավերդի, Շնող-Ալավերդի ներմարազային երթուղիները չեն գործում 2022թ-ի հունիս ամսից:

ՀՀ Լոռու մարզի մի շարք ներմարազային երթուղիներ չեն գործում, քանի որ ուղևորահոսքի նվազման հետևանքով ներմարզային երթուղիներ սպասարկելը դարձել է տնտեսապես ոչ շահավետ, դրան նպաստում է նաև այն, որ տաքսոմոտորային փոխադրումները բավականին ազատականացված են և կանոնավոր փոխադրումներ իրականացնողները գտնվում են ոչ մրցակցային պայմաններում:

Այժմ, համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի, նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնն իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիներն ամբողջովին:

30/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Վ.Ղարսայան
հեռ. /0322/ 2-03-91